թեամբ 'ի Քրիստոս (1818) 'ի 22 Օգոստոսի, վարեալ զիշխանութիւն Պատրիարքութեան, յետ ընտրութեան իւրոյ ամս 18 և յետ Նստելոյ յԱթոռն ամս 16, զորոյ զմարմինն թաղեցին պատուով 'ի վանս Ս. Փրկչի 'ի կարգս Պատրիարքաց։ Եւ յետ այնորիկ ժողովեալ եպիսկոպոսաց եւ վարդապետաց Աթոռոյն՝ գրեցին զիր հանրական առ Իշխանաւորս ազգին և առ Պօղոս պատրիարք, եւ թախանձանօք խնդրէին զնոյն ինքն զՊօղոս գալ Նստիլ յԱթոռ Պատրիարքութեան Երուսաղէմի, և կառավարել զմիաբանութիւնն հայրական սիրով, զի բազում էին երախտիք նորին 'ի վերոյ Աթոռոյն, լեալ պատճառ ազատութեան, շինութեան և պայծառութեան։ Եւ ապա յաւելուն ասել, զի եթէ Պօղոս զանկարելիութիւն ցուցեալ հրաժարեսցի, և կամ ազգքն ոչ կամիցի մեկնիլ նորին 'ի Կոստանդինուպօլսոյ, փոյթ մեծ կալցին՝ զի մի ոք արտաքուստ օտարական եկեալ գահակալեսցէ, որ 'ի նախնեաց անտի և 'ի Կարապետ Կաթուղիկոսէ նզովիւք արգիլեալ է, և լինել պատճառ կործանման Աթոռոյն և ցրուելոյ միաբանութեան, և լինիլ առակ նշաւակի առաջի օտար ազգաց, այլ մի միայն 'ի միաբանութենէ և յերեւելի յեպիսկոպոսաց Աթոռոյն զո և կամիցին ընտրել, խոստանային ամենեքեան որդիական հպատակութեամբ հնազանդիլ նմա։ Եւ թէ՝ մի լիցի իրրեւ զառաջինն միացուցանել զՊատրիարքութիւնն Երուսաղէմի ընդ Կոստանդինուպօլսոյ, որ նոյնպէս արգելեալ է, եւ որք ախորժեն և պատճառ լինին, հաղորդ են նզովից և առիթ կործանման Աթոռոյն։ Եւ թէ գրել յամենայն վիճակս, զի մի 'ի պատճառս վախճանի Պատրիարքին արգելցեն զնուիրակունս 'ի պաշտօնէ իւրեանց։ յայսոսիկ գիրս ստորագրեալ կնքեցին 8 Եպիսկոպոսունք, 27 վարդապետք, և 17 աշխատաւոր միաբանք, բաց 'ի սարկաւագաց և 'ի դպրաց։ 'ի սոյն միտս գրեցին նաեւ առ Փոխանորդն Երուսաղէմի Յակոբ վարդապետ։ Քանզի 'ի կենդանութեան Թէոդորոս Պատրիարքի ոմանք յանզգաստից բամբասեալ էին զնա յականջս ազգին, իբր պահեալ առ իւր զմեծ գումարս դրամոց։ Նմին իբր Խորհրդական Եպիսկոպոսունք զկնի 8 աւուրց թաղման նորին, բացին զգանձարանն Պատրիարքարանին՝ զոր կնքեալ էին նախ քան զաւանդումն հոգւոյ